ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380250
Էլ. փոստ nune@justice.am

Ա/10/21/662-12
09.02.2012թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի
նախագահ
տիկին Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 02.02.2012 թվականի թիվ 154-ի 3 գրության տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2011 թվականի ընթացքում թղթի ձեռքբերման համար ծախսվել է 3219000 ՀՀ դրամ և օգտագործվել է 4300 կգ. թուղթ:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով նախատեսված է 4623000 ՀՀ դրամ:

2011 թվականի համեմատությամբ 2012 թվականի համար նախատեսված թղթի ձեռքբերման գումարի 1404000 ՀՀ դրամով ավելացումը պայմանավորված է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի պետական ռեգիստրի գործակալությունում ներդրված «Մեկ պատուհանի կանգառի սկզբունք» ծրագրի ներդրմամբ, որի արդյունքում քաղաքացիներին հնարավորություն է ընձեռնվել տարբեր հիմնարկություններ այցելելու, տեղեկանքներ ստանալու փոխարեն բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի (կանոնադրություններ և այլն) օրինակելի ձևերը ստանալ «Մեկ պատուհանի կանգառի սկզբունք»-ով՝ պետական ռեգիստրի գործակալությունից:

Հարգանքով՝

Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ